Հաստատում եմ `

Կապանի N13 հիմնական դպրոցի տնօրեն՝ Ժ. Վարդանյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԿԱՊԱՆԻ N13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՄԿԱ ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄԿԱ գծով փոխտնօրեն ` **Ռիմա Մկրտչյան**

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ժամկետ	Կատարող	Պատասխանատու	Նշումներ
1	Օժանդակել և աջակցել ծնողներին առցանց համակարգի միջոցով ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանների ընդունելության և գրանցման աշխատանքներին:	Օգոստոս	օպերատոր	ՄԿԱԳ	
2	Աշխատանքները դպրոցում կազմակերպել հնգօրյա ռեժիմով:	Ուստարվա ընթացքում		ՄԿԱԳ	
3	Պահպանել դպրոցի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:	Ուստարվա ընթացքում		ՄԿԱԳ	
4	Գրադարանավարի և դասղեկների հետ համատեղ վերահսկել և օժանդակել որպեսզի սոցիալապես անապահով և Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներն ապահովվեն անվճար դասագրքերով:	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար Դասղեկներ	ՄԿԱԳ	
Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում					
5	Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել 1-9-րդ դասարանների դասղեկների միավորումներ: Տարրական դպրոց-միջին դպրոց Նշանակել դասղեկներին, ստեղծել 1-9 դասարանների դասղեկական միավորում և կազմել համագործակցային պլան: Պլանները ներկայացնել հաստատման նշված ժամանակահատվածում: Բարելավել դասղեկական աշխատանքները, կազմակերպել և ղեկավարել սովորողների դաստիարակչական, արտադպրոցական, արտադասարանական աշխատանքները և դասղեկների գործառույթները: Օժանդակել ԴԱԿ-ի աշխատանքային պլանի ներկայացմանը և հաստատմանը:	Սեպտեմբեր	Դասղեկներ ՄԿԱԳ	ՄԿԱԳ	
6	Դասղեկական ժամերի ժամանակացույցի կազմում: Կատարել մշտադիտարկում, հանդիպումներ դասղեկների հետ:	Ուստարվա ընթացքում /երկու շաբաթը մեկ/	Դասղեկներ Ծնողներ	ՄԿԱԳ	
7	Երաշխավորված խմբակների բաշխում: Իրականացնել վերահսկողություն դպրոցում գործող խմբակների գործունեությանը:	Ոստարվա ընթացքում	ՄԿԱԳ Խմբակի ղեկավարներ	ՄԿԱԳ	
8	1/ Տրամադրել աջակցություն ցածր առաջադիմություն ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին /Հայաստանի Հանրապետութ յան կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրամանում կատարված փոփոխությունները հաստատվել են 2023 թվականի սեպտեմբերի 4-ի N 113-Ն հրամանով (file:///C:/Users/Acer/Downloads/182249%20(4).pdf), համաձայն որի՝ հաստատություններում անհրաժեշտ է կազմակերպել երկարօրյա ուսուցում չափորոշչի ներդրման շրջանակում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսումնառության ցածր արդյունքներ ունեցող սովորողներին կրթական	Ոստարվա ընթացքում	Առարկայական ուսուցիչներ	ՄԿԱԳ Ուսմասվար	

	աջակցություն տրամադրելու նպատակով: 2/ Կարգի համաձայն՝ երկարօրյա պարապմունքները կարող են իրականացվել կրթության 1-ին աստիճանում (տարրական դպրոց)՝ շաբաթական առավելագույնը 2 ժամ, կրթության 2-րդ աստիճանում (միջին դպրոց)՝ շաբաթական առավելագույնը 3 ժամ: Ուսումնասիրել ցածր առաջադիմությամբ սովորողների ինքնուրույն աշխատանքները դասերի ընթացքում: Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին ընդգրկել առարկայական խմբակներում:				
9	Կազմակերպել դասղեկական բաց ժամեր և շաբաթներ համապատասխան թեմաներով՝ -Մեդիագրագիտություն -Ինքնագնահատում -Մասնագիտական կողմնորոշում -Հանդուրժողականություն -Բուլինգի բացառումը դպրոցում -Հաղորդակցության հմտություններ	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ Օպերատոր	ՄԿԱԳ	
10	Առարկայական ուսուցիչների հետ համագործակցությամբ՝ դաստիարակչական բաղադրիչի արդյունավետ ինտեգրում ծրագրային նյութի մեջ:	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ ՄԿԱԳ	ՄԿԱԳ	
11	Աշակերտական ինքնավարության մարմինների հմտությունների և կարողությունների զարգացման համար կազմակերպել սեմինարներ հետևյալ թեմաներով՝ - ԱԽ ձևավորում - ԱԽ նախագահի ընտրության կազմակերպում - ԱԽ-ի հանձնախմբերի և ակումբների ձևավորան աշխատանքներ - ԱԽ-ի պլանավորում և իրականացում - Միջոցառումների պլանավորում - Կամավորական հանրօգուտ աշխատանքներ - Համայնքի զարգացման հետ համագործակցային աշխատանքներ	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ԱԽ Դասարաններ	ՄԿԱԳ	
Աշխատանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների հետ					
12	1/ Օժանդակել և համագործակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպմանը, գնահատմանը և ԱՈԻՊ-ի գործողությունների քննարկմանը: 2/ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության ապահովում անհատական ուսուցման պլանի (ԱՈԻՊ) համաձայն:	Ուստարվա ընթացքում	ՏՄԱԿ Ուսուցչի օգնականներ	ՄԿԱԳ	
13	Մասնակցել ԿԱՊԿՈԻ երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ Ուսուցչի	ՄԿԱԳ	

	Օժանդակել ուսուցչի օգնականների հետ միասին՝ համագործակցությամբ ԱԽ-ի և ԴԱԿ-ի, ԿԱՊԿՈՒ սովորողների միջոցառումներում ընդգրկելուն և մասնակցելուն:		օգնականներ ՏՄԱԿ ԱԽ		
14	Խելացի հարմարեցումների ապահովում ուսումնական հաստատությունում:ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողին տրամադրվող և աջակցվող ծառայությունների ժամանակացույցը, տևողությունը, գրաֆիկը՝ հաստատված տնօրենի կողմից:		Ուսուցչի օգնականներ	ՄԿԱԳ	
Ուսումնադասիարակչական աշխատանքների կազմակերպում					
15	Աջակցել ուսումնադասիարակչական աշխատաքների կազմակերպմանը՝ միջոցառումներ, գիտաժողովներ, սեմինարներ,էքսկուրսիաներ, ինտելեկտուալ մրցույթներ, պատի թերթերի լույս ընծայում, այլբոմների պատրաստում, մեթոդական անկյունների ստեղծում և այլն:	Ուստարվա ընթացքում		ՄԿԱԳ	
16	Աշխատանք տանել սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ՝ - Համագործակցել ՀՀ ՆԳ Կապանի ոստիկանության անչափահասների բաժնի հետ՝ կազմակերպելով հանդիպումներ, զրույցներ և այցեր:	Ուստարվա ընթացքում		ՄԿԱԳ	
Ֆիզիկական դաստիարակություն, ռազմահայրենասիրական և գեղագիտական դաստիարակություն,					
17	Ստեղծել արտադասարանական խմբակներ՝ Առողջ ապրելակերպ /ՀՊՉ 5-րդ և 7-րդ դասարաններում/	Ուստարվա ընթացքում	ֆիզղեկներ	ՄԿԱԳ	
18	Սպորտլանդիաների, խաղուղավազքի, Ազգային Ժողովի Գավաթի, Վարչապետի Գավաթ, վոլեյբոլի, ֆուտբոլի, թենիսի, կրակային վարժանքների, շախմատի միջդպրոցական, մարզային, հանրապետական մրցումների կազմակերպում:	Ուստարվա ընթացքում	Ֆիզղեկներ Դասղեկներ Զինղեկ	ՄԿԱԳ	
19	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը աշնանային, ձմեռային, գարնանային, ամառային դպրոցական արձակուրդներին/ըստ ժամանակացույցի/:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ ԴԱԿ ԾԽ ԱԽ	ՄԿԱԳ	
20	Համագործակցել դպրոցի զինղեկի ,Ն զորամասի հետ և համակարգել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակչական գործընթացը՝ կազմակերպելով ռազմահայրենասիրական միջոցառումներ, նպատակը հայրենասիրական դաստիարակության ամրապնդում:	Ուստարվա ընթացքում	Ն զորամաս Զինղեկ Դասղեկներ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱԳ	
21	«Սյունիքի պատմութուն» ծրագրի աշխատանքների շարունակական կազմակերպում՝ -Մրցույթներ - Բաց դասեր - Ֆիլմերի դիտում - Այց զորամաս (նպատակը՝ սեր հայրենիքի և նրա պատմությունը	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱԳ	

	իմանալու, հարգանք հայրենի հողի - նկամամբ):				
22	Կազմակերպել միջոցառումներ N զորամասի հետ համատեղ ա/Փոխադարձ այցելություններ, հանդիպումներ, զրույցներ, գործնական վարժանքներ, ոգեկոչման ցերեկույթներ: բ/Կազմակերպել հայրենասիրական դասեր Արցախյան 44-օրյա պատերազմում դպրոցի զոհված շրջանավարտ Սասուն Ներսիսյանի անվան դասարանում: գ/Անցկացնել զրույց-հանդիպումներ Արցախից բռնի տեղահանված աշակերտների ընտանիքների հետ		ԴԱԿ ԱԽ ԾԽ Դասղեկներ	ՄԿԱԳ	
23	ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության բարելավմանը Դպրոցում ստեղծել տնօրենությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ: Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները: Կահավորել դասասենյակներն ու միջանցքները, ստեղծել վահանակներ համապատասխան թեմատիկայով:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱԳ	
Ներդպրոցական վերահսկողություն					
24	Իրականացնել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ	ՄԿԱԳ	
25	Յուրաքանչյուր ամսվա վերջում տնօրենին կից խորհրդի նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:		Դասղեկներ ԾԽ	ՄԿԱԳ	
26	ՆԴՎ. Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը, քննարկումներ կազմակերպել,լսել դասղեկներին և նրանց կողմից եղած առաջարկություններին:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ	ՄԿԱԳ	
Աշխատանք ծնողների հետ					
27	Կազմակերպել համադպրոցական ժողովներ, նիստեր և սահմանել բաց դռների օր ամեն ամսվա վերջին հինգշաբթի օրը:	Ուստարվա ընթացքում	ԾԽ ԴԱԿ Ուսուցիչներ	ՄԿԱԳ	

28	1/ Դասարանների և դպրոցի ծնողական խորհուրդների ձևավորում: Ընդհանուր ծնողական ժողովի անցկացում/ Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ, որոնց կողմից ընտրված ծնողական խորհուրդների կազմից ձևավորվում է հաստատության ծնողական խորհուրդը: Անցկացվում է հաստատության (անհնարինության դեպքում՝ առանձին-առանձին՝ 1-4-րդ, 5-9-րդ, դասարանների) ծնողական ժողով՝ տնօրենի մասնակցությամբ: 2/ Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին:	10. 09-20. 09		Տնօրեն ՄԿԱԳ	
29	Ապահովել դպրոց-ընտանիք կապն ու համագործակցությունը ավելի արդյունավետ դարձնել՝ կազմակերպելով միջոցառումներ /ծառատունկ,սեմինար-հանդիպումներ,այցեր, էքսկուրսիաներ,մշակութային միջոցառումներ/:	Ոստարվա ընթացքում	Դասղեկներ ԴԱԿ ԾԽ	ՄԿԱԳ	
30	Հրավիրել ԾԽ-ի նիստեր և քննարկել դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունը և տնօրենի աշխատանքային պլանը	Ոստարվա ընթացքում	ԴԱԿ ՄԿԱԳ ԾԽ	ՄԿԱԳ	
31	Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների ուսումնական և արտադպրոցական գործընթացում	Սեպտեմբեր	ԴԱԿ ԾԽ	ՄԿԱԳ	
32	Կազմակերպել և համակարգել ծնողավարման դասընթացները - Կլոր սեղան՝ ուսուցիչ-ծնող-սովորող - Բոլորն էլ հավասար իրավունքներ ունեն (ԿԱՊԿՈՒ ծնողների համար) - Ճանաչենք և ընկեր լինենք մեր երեխաներին - Դեռահասության տարիքի առանձնահատկությունները - Հանդուրժողականությունը կարևոր է բոլոր հարաբերություններում - Համակարգել և ակտիվացնել ծնողների ներգրավվածությունը և մասնակցությունը «Դպրոցական տաք սնունդ» ծրագրի իրականացմանը դպրոցում	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ԾԽ Դասղեկներ	ՄԿԱԳ	
33	Կազմակերպել սեմինարներ հետևյալ թեմաներով՝ - Դաստիարակության դրական մոտեցումներ - Հասկանանք երեխաներին և ինքներս մեզ - Երեխաների իրավունքները, սովորողների պարտականությունները - Դրական դաստիարակության մոտեցումները - Խրախուսում - Ընկճախտի կառավարում - «Պատիժ, և պե՞տք է այն արդյոք»	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ ԴԱԿ ԾԽ	ՄԿԱԳ	
34	Աջակցել դպրոցում «Արմաթ» ինժիներական լաբորատորիայի աշխատանքներին սովորողների ակտիվ ընդգրկմանը	Ուստարվա ընթացքում	ԱՐՄԱԹ կոորդինատոր Դասղեկներ ԾԽ	ՄԿԱԳ	

35	Շարունակել համագործակցել Վորլդ Վիժն Կապանի գրասենյակի, մանկական կենտրոնի, ՏՄԱԿ-ի, էլեկտրոնային գրադարանի և այլ ՀԿ-ների հետ:	Ուստարվա ընթացքում	ՎՎ ՀԿ ԾԽ ԴԱԿ ԱԽ	ՄԿԱԳ	
36	Համագործակցել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի հետ, իրականացնել կրթական և ուսումնաօժանդակ ծրագրեր	Ուստարվա ընթացքում	Ուսմասվար ՄԿԱԳ	Սյունիքի մարզի ԿԳՄՍ վարչություն	